



ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՉԵՌԱԳՐԱՑ  
Ը ԴԱՐՈՒ ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿ ՂԵՎՈՆԴ ԵՐԻՑՈՒ  
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ

Կարապետ Եզյան 1887-ին Ս. Բեդերբորգի մեջ հրատարակեց Ղևոնդի պատմագրության երկրորդ տպագրությունը **Պատմություն Ղևոնդեայ Մեծի Կարդապետի Հայոց վերնագրով**: Ցարդ այդ թվականին ասոդին Ղևոնդ նոր հրատարակության մը չէ արժանացած:

Իր ընդարձակ ներածականին մեջ Եզյան կնշե շարք մը օգտակար տեղեկություններ Ղևոնդի պատմագրության այլ հրատարակությանց և ասոց որպէս բնագիր ծառայող ձեռագրաց մասին, ըստ հետևյալին:

Էջ հը—«Ի ձեռագիր օրինակս պատմութեան Ղևոնդեայ է խորագիր այսպիսի Պատմություն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց որ յաղագս երեւելոյ Մահմետի եւ գկնի նորին, թէ որպէս եւ կամ որով օրինակս տիրեցին տիեզերաց, 'ես ասանէլ ազգիս Հայոց»:

Էջ Ժ—«Յամի Տեսուն 1856-րդի Կարապետ վարդապետ Ծանազարեանց ընծայեաց ի յոյս ի Փարիզ քաղաքի գթարգմանութիւն պատմութեանն Ղևոնդեայ ի լեզու գաղղիացոց հանդերձ քաղմաթիւ ծանօթութեամբք, ընդ խորագրաւ Histoire des guerres et des conquetes des Arabes en Armenie, par l'eminent Ghevond vartabet armenien, ecrivain du huitieme siecle. «Իսկ յամին 1857 գտաջինն ընծայեաց նա ի յոյս ի նմին քաղաքի եւ գնայերէն բնագիր պատմութիւնս հանդերձ ծանօթութեամբք, զորս մեծաւ մասամբն առեալ ելել ի հայ ի գաղղիական թարգմանութենէն իրմէ:

«Ձուպագիրն իր արար Կ. Վ. Ծան-

նազարեան ըստ միում օրինակի, զոր գաղափարեալ էր նորա ի ձեռագիր պատմութենէն Ղևոնդեայ մատենադարանացն Ս. Էջմիածնի:

«Յամին 1862 ըստ առաջարկութեան ճեմարանին գիտութեանց որ ի Ս. Բեդերբորգ արար Ք. Պատկանեան գթարգմանութիւն պատմութեանս ի լեզու Ռուսաց եւ յանէլ ի նմա ծանօթութիւնս քաղմաթ կարի հետաքննականս:

«Նորս այս մեր տպագիր արարաւ համեմատութեամբ առաջնոյ տպագրինն ընդ ձեռագիր օրինակի պատմութեանն Ղևոնդեայ որ առ մեզ, զորմէ ասանդեալ են լիակատար տեղեկութիւնք ի Յառաջարանի Պատմութեանն Ասողկան յէջս 14-րդ: Եւ քանզի, որպէս անդն յիշատակի, թերի էր ի ձեռագրի յայսմիկ Պատմութիւնն Ղևոնդեայ ի սկիզբն մինչեւ ցգլովսն ԺԳ (յէջն 43 տպագրին մերոյ), վասն այսորիկ խնդրեցաք յարժանապատիւ Յուսկանէ վարդապետէ Մովսիսեանց տալ գաղափարել ի ձեռագիր օրինակէն Մատենադարանին Ս. Էջմիածնի գմասնն թերի ձեռագրիս մերոյ:

Էջ ԺԱ—«Բաղդատութեամբ ձեռագիր օրինակացս այսոցիկ ընդ առաջնոյ տպագրինն ըստ խնդրոյ մերում կազմեաց զբնագիր մերոյս Տպագրի Սո. Մալխասեանց, հանդերձ ցուցմամբք տարբեր ընթերցումոցն ի ստորոտս իւրաքանչիւր իջից:

«Գլխակարգութիւնք յայսմ Տպագրի նշանակեցան ըստ բաժանմանց գլխոց Զեռագրի օրինակին որ առ մեզ, քան-

զի գլխակարգությունը Փարիզեան տպագրին ոչ են Ղևոնդի, այլ հրատարակչի նորին Կ. Վ. Ծահնագարեանը»:

Վերոհիշյալ մեջբերումներեն կհայտնվի թե Ղևոնդի պատմագրությունը չորս հրատարակությանց արժանացած է ցարդ.—1856-ին ֆրանսերեն թարգմանությամբ և 1857-ին հայերեն թարգմանությամբ, երկրորդն Կարապետ վրդ. Ծահնագարյանի կողմեն ի Փարիզ: 1862-ին Բերդյան Պատկանյան Ս. Բեդեր-բուրգի մեջ գայն կհրատարակե ռուսերեն, և վերջապես նույն քաղաքին մեջ 1887-ին Ստեփան Մալխասյանցի քննական բնագիրը ի լույս կընծայե Կարապետ Եզյան:

Նույն հառաջաբանեն կհայտնվի նաև որ առաջին երկու հրատարակությունց համար Կ. Վ. Ծահնագարյան ի ձեռին կունենա միայն մեկ ձեռագիր գործին ընդօրինակած էր այլ ձեռագրե մը որ ի պահ կմնար ս. Էջմիածնի Մատենադարանին մեջ: Այս պարագան առավել կպարզվի Frederic Macler-ի հայթայթած տեղեկությամբ<sup>1</sup>, ըստ որում Ծահնագարյան կատարած է բնագրի ընդօրինակությունը 1855-ին Թիֆլիսի Կարապետ արքեպիսկոպիտ Բագրատունիի ձեռագիր օրինակի վրայեն, Փարիզի Մատենադարանին խնդրանք<sup>2</sup>: Ծահնագարյանի գաղափարյալ ձեռագիրը Macler-ի ցուցակագրության մեջ կկրե 209 թիվը: Կարևոր է հետևաբար ստուգել Թիֆլիսի Կարապետ արքեպիսկոպիտ Բագրատունիի ձեռագրին գոյությունը, քանի որ Ծահնագարյանի գույգ հրատարակությունները հիմնված են այդ միակ բնագրի վրա: Արդ, Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրաց ցուցակեն<sup>3</sup> կստուգվի թե Մատենադարանի թիվ 3070 ձեռագիրը, գրված ԺԷ դարուն, իրոք կպատկաներ Թիֆլիսի Կարապետ արքեպիսկոպիտին: Ստորև պիտի տանք սույն ձեռագրի նկարագրակալը իր կարգին:

F. Macler-ի նույն ցուցակին մեջ կա նաև այլ ձեռագիր մը Ղևոնդի պատմագրության որ կկրե 208 թիվը<sup>4</sup>: Սույն ձեռագիրը կկրե փոքրիկ հիշատակարան մը գրիչին իսկ

կողմեն, Ed. Dulaurier-ի, որ ընդօրինակած է գայն M. Brosset-ի պատկանող ձեռագիր օրինակեն սեպտեմբեր 13—22-ի ընթացքին 1851 թվականին Dulaurier կհայտնե նաև որ Brosset-ի իսկ ձեռքով մնացած հիշատակարան մը, մատյանի պահպանակին վրա, կտեղեկացնե թե ձեռագիրը ընդօրինակված էր Թիֆլիսի Կարապետ արքեպիսկոպիտին մի ոմն Ժան Լազարոֆի ձեռամբ, և թե ձեռագիրը ԺԷ դարու գրություն մը եղած է:

Ուստի, այժմ նկատելի է որ ԺԷ դարուն գրված Ղևոնդի պատմագրության բնագիրը, որ ներկայիս Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 3070 ձեռագիրն է, կարևոր բնագիրներեն մին է Ղևոնդի երկին:

Եզյան իր 1887-ի հրատարակության մասին խոսելով կտեղեկացնե թե ինք իր ձեռքին տակ ուներ սեփական բնագիր մը (ձեռագիր) Ղևոնդի երկին որուն աակյան կպակսեին առաջին 12 գլուխները (մինչև 43-րդ էջը տպագրյալ բնագրին): Այս կարելի էր թերիին պատճառով Եզյան խնդրած էր Հուսիկ վրդ. Մովսիսյանեն որ ս. Էջմիածնի Մատենադարանի օրինակեն ընդօրինակել տար պակսող 12 գլուխները:

Եզյանի հրատարակությունը, կատարված Ստ. Մալխասյանցի աշխատասիրությամբ, կհայտնե երեք բնագիրներու օգտագործումը.

ա) Ծահնագարյանի տպագիր հրատարակության (1857).

բ) Եզյանի սեփական ձեռագրին (թերի 12 գլուխներով).

գ) ԺԳ դարու լավագույն օրինակի (ձեռագիր թիվ 1902 Մատենադարանի):

Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն պրոֆ. Լևոն Խաչիկյան իր մարտ 31 1972 թվակիր նամակով կհաստատե այն թե «Կարապետ Եզյանը Ղևոնդ պատմիչի իր հրատարակությունն իրագործել է իր անձնական ձեռագիր օրինակի, 1857 թվի Կ. Ծահնագարյանի հրատարակության և Մաշտոցյան Մատենադարանի № 1902 ձեռագրի բաղադրությամբ»: Թե Եզյան օգտագործած է վերոհիշյալ ԺԳ դարու գրչագիր օրինակը լավագույնս կապացուցվի հրատարակյալ բնագրի վերջավորության գտնվող հիշատակարանեն որ նույնն է Մատենադարանի թիվ 1902 ձեռագրի հիշատակարանին հետ:

Եզյանի սեփական ձեռագիրը, որ թերի էր «ի սկիզբն մինչև 99 գլուխն ԺԳ», կարելի է հեշտով նույնացնել Մատենադարանի թիվ 4584 ժողովածուին հետ, գրված Տիգրանակերտի մեջ 1668 թվին, որ և հիրավի նույն թերությունն ունի:

Հետևաբար, այժմ հայտնի կդառնա որ

<sup>1</sup> Frederic Macler, Catalogue des Manuscrits Armeniens et Georgiens de la Bibliotheque Nationale, Paris MDCCCXVIII.

<sup>2</sup> Անդ, ձեռ. թիվ 209, էջ 115—116:

<sup>3</sup> Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատ. Բ, Երևան, 1970, խմբ. Լ. Խաչիկյանի և Ա. Մնացականյանի:

<sup>4</sup> Անդ (ներածակյան), էջ 68: Տես Հ. Ն. Ակիմեան, Մատենագրական հետազոտություններ, հատ. Գ, Վիեննա, 1980, էջ 842:

<sup>5</sup> Macler F., նշ. աշխ., էջ 115:

Եզյան իր 1887-ի հրատարակությանը համար բաղդատած է հետևյալ ձեռագիրները. ա) Թիվ 1902, ԺԳ դարու լավագույն օրինակը.

բ) Թիվ 4584, ԺԷ դարու թերի օրինակը.

գ) Թիվ 3070, ԺԷ դարու Թիֆլիսի կաթարպետ արք. Բագրատունյի օրինակը (հետ տպագրության Կ. Վ. Ծահմագարյանի կողմից):

Կարելի է ընդունիլ որ իր հրատարակությանը Եզյան աչքի առջև ունեցած է գոյություն ունեցող գրչագիրներեն նախնագույնն (ու ամենավաղագույնը), ինչպես նաև երկու այլ ընտիր օրինակներ որոնց շնորհիվ սույն հրատարակությունը կարելի կըլլա նկատել ընտիր և թերևս նույնիսկ քննական:

#### Ղեկնղի պատմագրության ձեռագիրները

Մեր ուսումնասիրությունը առավել հաստատ և համոզիչ դարձնելու մտքը ստորև կուտանք գոյություն ունեցող և մեզի ծանոթ գրչագրաց ցուցակն ու հիշատակարանները: Հատուկ շնորհակալիք կպարտիմ պրոֆ. Լևոն Խաչիկյանի, Մաշտոցյան Մատենադարանի տնօրենին, որ հաճեցավ մեր խրնդարանքին վրա արտագրել և ողարկել Մատենադարանին մեջ պահվող Ղեկնղի յոթը ձեռագրաց հիշատակարանները:

Երևանի Մաշտոցյան Մատենադարանին մեջ կպահվին ընդամենը ութը ձեռագրեր որոնցմե մին (թիվ 4442) ընդօրինակված է արդեն իսկ տպագրյալ բնագրե մը: Մեզի կմնա ուրեմն ծանոթանալ մնացյալ յոթը օրինակներուն:

**ՁԵՌԱԳԻՐ ԹԻՎ 1902**

#### ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԺԳ դար: Գրիչ՝ Սարգիս: Ստացող՝ Համագաստ Հաղբատեցի: Կազմող՝ Ծնվում վրդ.: Թերթ՝ 515: Թուղթ՝ 24,4×16,4: Միասյուն: Բոլորգիր: Տող՝ 19—20: Պահպանակ՝ մագաղաթ 1 (մասունք), ողղագիծ երկաթագիր: Կազմ՝ կաշեպատ տախտակ: Աստու շերտազարդ կտավ: Հիշատակարան գրչի՝ 130բ, 217բ. կազմողի 4ա, 239բ, 294ա (1664 թ.), 310ա (1690 թ.):

Բովանդակություն. Ղեկնղեայ երիցու Պատմություն հայոց: Եւագրեայ Հարիւրաւորքն վեցերորդք, խրատք, Թուղթ առ Մելանիս. կից Լուծմունք, գոր արարեալ է ումեմն ի լեռնէն Ննէի ի խնդրոյ եղբարց: Պատմություն Վրաց:

(Ղեկնղի մասն) Թերթք 3բ—130բ. Պատմություն Ղեկնղեայ մեծի վարդապետի Հայոց, որ յաղագս երեւելոյն Մահմետի և զկնի նորին, թէ որպէս և կամ որով օրինակաւ տիրեցին տիեզերաց, եւս առաւել թէ

Հայոց ազգիս. Նախ և առաջին, որք և Ասիրըյմունիք անունեցան, զի գրասն ամ կալեալ զիշխանութիւնն, Մահմետ մեռանի...) (մինչեւ եղեւ թողութիւն գիտից և ծառայից և պարտոց և ապա կատարած: (Վերջ)

#### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 180բ. (գրչի) «Կատարեցաւ վարդապետութիւն Ղեկնղի վասն ժամանակագրաց տանս Թորգոմայ, ի հրամանէ տեսուն Ծապհոյ Բագրատունոյ, որ և ցանկացող եղեալ սորին տէր Համագաստ ի պատուաւոր յազգէն Մամիկոնեանց, ի հալալ արդեանք եւս հրաման ծրել փծուն գրչի Սարգ(ս)ի: Աղաչեմ յիշեցէք յողորմածն Աստուած, և նմա փառք յաիտեանս, ամէն»:

Թ. 217բ. «Արդ աղաչեմ զամենեւեան, որք ընթեռնույք, լսէք և կամ արիւնակէք զմեծախառնակ ճգնաւորին Եւագրեայ զհոգիաշահ հրամանքս, յիշեցէք զարժանին բարի յիշատակաց և զբազմաց վկայեալն ի յան գտէր Համագաստ: Թէ յիշէք զփծուն գրիչ զՍարգիս, որ եւս սովեալ ի հոգեւոր կերակրաց, ողորմածն Աստուած ամենեցուն ողորմեսցի յարն կարեաց, զի նմա վաւելէ փառք և երկրպագութիւն այժմ և միշտ և յաիտեանս յաիտեցից, ամէն»:

Թ. 293բ—294ա. (նորոգող-կազմողի) «Պատմութիւնս Ղեկնղեայ և գիրքս Եւագրեայ և վերջին Պատմութիւնս Վրացեաց յիշատակ է Յոհաննու Կարճասնեցոյ, որ փտեալ կայր, վերստին նորոգեցի և կազմել ետու սիրեցելոյն իմոյ Ծնաուն վարդապետի Լոնեցոյ, ի թվիս ՌՃԺԳ (1664), ի փառս Քրիստոսի, որք վաւելէք յիշեսցիք ի Քրիստոս»:

Թ. 310ա. (Հետագայի) «Զստացող գրոցնս, որ կոչի Ղեկնղ պատմագիր և Վրաց պատմագիր և սուրբ հօրն անապատաւրացն Եւագրի բանք և խրատք բազում, որ և Վարդան վարդապետս Բաղիշեցի ստացայ ի հալալ արդեանց իմոց և ետու յիշատակ ի դունս սուրբ Էջմիածնի ի փրկութիւն հոգւոյ իմոյ, որք ընթեռնուք և օգտիք ի սուրբ գրոյս, յիշեցէք ի Քրիստոս զհաղիշեցի Վարդան վարդապետն և զճնօղսն իր, ամէն: Ի թվին ՌՃԼԹ (1690)»:

Վերևի հիշատակարաններեն թեև ձեռագրիս գրության ստույգ թվականը չգիտցվիր և սակայն բավարար չափով հայտնի կըլլա երբ նկատի առնենք տէր Համագաստ Մամիկոնյանի Հովհաննա վանոց վանահայրության շրջանը (1279—1311)<sup>6</sup>: Տէր Հա-

<sup>6</sup> Հմմտ. Հ. Ն. Ալիևեան, Մատենագրական հետազոտություններ, Վիեննա, հատ. Գ, էջ 34:

մագապի վանահայրության հիշատակը պահած են կարգ մը արձանագրություններ: 1664-ին ձեռագիրս կատանա Հովհաննես Կարճավանեցի, նորոգել ու կազմել կոտա գայն իր աշակերտներեն Լոռեցի Շմալոն վարդապետին, և հետո ձեռագիրս կմնայ Ամրտոլու վանքի քանասեր Վարդան վրդ. Բաղիշեցվո մոտ 1670-ին որ և գայն ս. Էջմիածնի Մատենադարանին կմվիրեն 1690-ին: Հայտնի է ուրեմն որ Սարգիս գրիչ օրհնակած է գայն 1279—1311-ի շրջանին Հովհաննես վանքին համար, թե իսկ գրության վայրն անհայտ ըլլա: Ըստ Հ. Ն. Ալիկյանի «մեզի հասած բոլոր օրհնակները ծագած են Շմալոն Լոռեցվո նորոգած այս ձեռագրեն, ուրեմն 1664-են հետո»<sup>7</sup>:

**ՋԵՌԱԳԻՐ թիվ 4584**

### ԺՈՂՈՎԱԾՈՒ

1668 թ. Տիգրան--ակերտ--: **Գրիչ՝** Արախան երեց: **Ստացող՝** Խշ Ավետիս, Դարաղաշ Ամթեցի, Խշ Սահակ: **Թերթ՝** 389: **Թուղթ՝** 28×20: Երկայուն: Նոտրգիր: **Տող՝** 55: **Մանրանկար՝** կի, լգ: **Պահպանակ՝** մագաղաթ 2, ուղղագիծ երկաթագիր, Ավետարան: **Կազմ՝** կաշեպատ տախտակ: **Հիշատակարան՝** գրչի 11ա, 24ա, 35բ, 48ա, 73բ, 74ա, 129ա:

**Բովանդակություն**—Մովսէս Խորենացի, Սո. Տառնեցի, Ար. Լաստիվերտցի, Եսեբիոսի Պատմք. Եկեղեցական, Ագաթանգեղոս, Դաշանց Թուղթ, Մեսրոպ Վայցաճորեցու Պատմք. Մեծին Ներսէսի, Յովհան Մամիկոնեան Պատմք. Տառնոյ, Փաստոս, Եղիշէ, Օրբելեան, Պատմք. Հացունեաց, Սոկրատայ Պատմք., Միխայելի Ասորոյ ժամանակաց գրոյցք, Վարդան Արեւելցի, Կիրակոս Գանձակեցի, Թովմայ Մեծոփեցի, Կիր. քանասիրի վարք Թովմ. Մեծոփեցու: Մնաստայ Սպարապետի Պատմք.: Ի ժամանակաց գրոյցից Միխ. Ասորոյ (հատուած): Դեմոնդեայ Երիցու Պատմութիւն Հայոց:

(**Ղևոնդի մասն**) Թ. 375ա—386բ.— (Սկզբեն թերի է) ...առ գունդ, այլ ըմբշամարտ մարտին: Եւ յապաղէր յաքանն զխառնամիսի պատերազմն... )( մինչեւ եղև թողութիւն գիրիցի եւ ծառայից եւ պարտոց եւ ապա կատարած: Կատարեցաւ

<sup>7</sup> Հմմտ. Հ. Յ. Տաշեան, Ժողովածոյք առակաց Վարդանայ, Վիեննա, 1900, էջ 188—189: Նաեւ M. Brosset, Rapports sur un voyage archeologique dans la Georgie et dans l'Arménie, III, St. Petersburg, 1849.

<sup>8</sup> Ալիկյան Հ. Ն., Մատենագրական հետազոտութիւններ, Գ, էջ 342:

վարդապետութիւն Ղևոնդի վասն ժամանակագրաց տանա Թորգոմայ, ի հրամանէ տեառն Ծապհոյ Բագրատունոյ, ի փառս եւ ի գովեստ ամենասուրբ Երրորդութեանն, որ է օրհնեալ այժմ եւ միշտ, յափտեանս յափտենից, ամեն:

### ՀԻՇՍԱՍԱԿԱՐԱՆ

**Թ. 11ա (գրչի)** «Ով ընթերցող սուրբ հայրապետք եւ աստուածաբան վարդապետք, յիշեցիք ի մաքրափայլ աղօթս ձեր գտացող գրոյս գմահդասի խոճա Աւետիսն եւ զանարծան Աբրահամ գրիչս տէր ողորմեալի:

**Թ. 24ա.** Որք հանդիպիք սմա յիշեցիք յաղօթս ձեր գտացող գրոյս Յամթեցի միտեսի Դառաղաշն եւ զճնօղսն նորա եւ մեղաթաւալ Աբրահամ գծողս եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ, ամեն:

**Թ. 35բ.** ...Մանաւանդ գտացող գրոյս գմահդասի Աւետիսն եւ զճնօղսն իւր զԿրճպօսն եւ գմայրն գմահդասի Մարրն եւ գորդին զՊաղտասարն եւ դուստրն զՍառան եւ զհոգւոյ որդին զՍարուխանն եւ զծող գրոյս:

**Թ. 48ա.** Ով սրբասէր եւ բանաստեղծ փիլիսոփայք, յորժամ օգտիք բան ինչ գրոցս այս, յիշեցիք ի մաքրափայլ աղօթս ձեր գտացող գրոյս գմահդասի Դարաղաշն եւ զծող գրոյս զԱբրահամ երեցն եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ, ամեն:

**Թ. 73բ.** Գրեցաւ ձեռամբ Աբրահամ անարծանի ի Տիգրան քաղաքի ի մատրանին սուրբ Սարգիս ՌԾԺԷ (1668) թվին, աղաչեմ յիշել զիս եւ զճնօղքն իմ գտէր Յովհաննէսն եւ զԹամամն, եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ, ամեն:

**Թ. 74ա.** Ով դասք լուսերամից, յորժամ ընթեռնուք, յիշեցիք ի մաքրափայլ աղօթս ձեր գմահդասի Դարաղաշն եւ զճնօղսն իւր զԿրճպօսն, մայրն գմահդասի Թունիկն եւ զկողակիցն գմահդասի Մարրն եւ ըզդուստրն զՍառան եւ զորդեակն իւր զՊաղտասարն, որ առ Աստուած փոխեցաւ եւ զհոգւոց որդին զՍարուխանն եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ, ամեն:

**Թ. 129ա.** Ջստացող տաղիս զՍահակն եւ զհայրն իւր զԹորոսն եւ գմայրն իւր գմահդասի Թանան եւ զկողակիցն իւր զՄաղթումըն եւ զհոգւոց որդին իւր զԳրիգոր սարկաւազն, եւ զԱբրահամ գծողս յիշել ի Քրիստոս եւ դուք յիշեալ լիջիք, ամեն:

**ՋԵՌԱԳԻՐ թիվ 3070**

### ԺՈՂՈՎԱԾՈՒ

1669—1674 թթ.: Վան: **Գրիչ՝** Դավիթ անճղուկ, Գրիգոր երեց, Վարդան Բաղիշե-

ցի: Ստացող՝ Վարդան Բաղիշեցի: Թերթ՝ 438: Թուղթ՝ 20,1×15,5: Միապուն, երկապուն, եռապուն: Նոտրգիր, բոլորգիր: Տող՝ 19—20: Մանրանկար՝ Գր. Լուսավորիչ և Զեւոր Գլակ 1, կիս, լգ: Պահպանակ՝ մագաղաթ 2, բոլորագիծ երկաթագիր, Ավետարան: Կազմ՝ կաշեպատ տախտակ: Հիշատակարան՝ գրչի 48ա, 158բ, 391բ, հետագայի 396բ (1721 թ):

**Բովանդակություն.**—Յովհան Մամիկոնեան Պատմիք. Տարօնոյ: Վասն Ս. իղյոյն: Սո. Ասողկան Պատմիք. Ժամանակաց: Արիստ. Լաստիվերցոյ վասն անցից անցելոց: Ղեւոնդայ երիցու Պատմիք. Հայոց: Պատմութիւն. Վրաց: Ստեփանոսի Որդոյ Յուսկան խրատ հաստատեցելոց: Միսիրար Այրիվանեցոյ Պատմութիւն: Մկր. Մեծփետոյ Վարք Մի. Սաանեցոյ: Յաղագս Արամայ եւ Եւայի: Սո. Օրբելեան Վասն Մեծի Ասիաբարութեանն Օրբելեանց: Սահակայ Արծրունոյ Թուղթ սո Մովսէս: Վարդանայ Աշխարհացոյց: Գիր օճահարի: Անաքելի Տաղ: Աշխարհացոյց լատինացոց (թրգմ. Յովհ. Անկիւրացի):

(Ղեւոնդի մասն) Թ. 239բ—405բ. Պատմութիւն Ղեւոնդեա մեծի վարդապետի Հայոց, որ յաղագս երեւելոյն Մահմետի եւ զկնի նորին, թէ որպէս եւ կամ որով օրինակաւ տիրեցին տիեզերաց, եւս առաւել թէ Հայոց ազգիս.—Նախ եւ առաջին, որք եւ Ամիրջըմումնիք անուանեցան, զի զքսան ամ կալեալ զհիսանութիւնն Մահմետ մեռանի...)( մինչեւ եղեւ թողութիւն գիտից եւ ծառայից եւ պարտոց եւ ապա կատարած: (Ծնթ. Կհաջորդէ Սարգիս գրիչի հիշատակարանը: Տես ձեռագիր թիվ 1902, թերթ 130բ):

#### ՀԻՇՍԱՍԿԱՐԱՆ

Թ. 48ա (գրչի). «Գրեցաւ սակաւ պատմութիւնս Զեւորայ պատմագրի, ի վայելումն սրբազան րաբունոյն Վարդան վարդապետին Բաղիշեցոյն եւ յիշատակ հոգւոց իւրոյ եւ ծնողաց, ձեռամբ անարժան Դաւիթ ճրնդկի: Թվ. ՌԾԺԸ (1669):

Թ. 158բ—159ա. Աղաչեմ մի անփոյթ առնէր եւ տէր հատուցէ քեզ զվարձս քո. ընդ մեկն եւ եւ յետինս յամենեւեան եւ քան զքնաս յանցաւորս եւ անթիւ մեղօք ծանրաբեռնաւ եւ արժանիս մահուց եւ ոչ մի կենաց խաւարամածս ոգով Գրիգոր (ջրնջրված և գրված է Յօհան) գրչիս, որ չեմ յիշելոյ, աղաչեմ յիշել յաղօթս առաջի Քրիստոսի զիս եւ զճնօղսն իմ, որպէսզի աղօթիք ձեր գտցուք ողորմութիւն ի Քրիստոս, եւ տէր տաւէ զտրիտուրն ձեզ բազումս, ամէն:

Թ. 365բ. Գրեցաւ սակաւ բանքս ի քա-

ղաքս Վան, ընդ հովանեաւ սուրբ առաքելոցն Պետրոսի եւ Պողոսի, ՌԾԻԳ (1674) թվինն, ձեռամբ անարժան Գրիգոր երիցու: Աղաչեմ յիշել զիս միով տէր ողորմայի, եւ Աստուած ողորմի սակ ինձ մեղաւորիս:

Թ. 391բ. Յիշեալ գնեղուցեալ եւ բազմագրեւ ոգիս Վարդանայ վարդապետի Բաղիշեցոյ յոյժ ողորմելոյ եւ թափառելոյ, որ սակաւ աշխատեցայ ի գրել սորա հանդերձ սրբագրութեամբ կիտի եւ տնատութեամբ, զի հեշտասցի եւ քաղցրասցի ընթերցողացը, բայց եւ ի նեղութենէ իմմէ կոտի եւ ժողով գրեցի, դու թէ կամիս ընդարձակեալ, ով գաղափարող:

#### ԶԵՌԱԳԻՐ ԹԻՎ 1889

##### ԺՈՂՈՎԱԾՈՒ

1675 թ. Նոր Զուղա: Գրիչ՝ Մարկոս, Հայրապետ: Թերթ՝ 380: Թուղթ: 24,3×18,5: Երկապուն: Բոլորգիր, նոտրգիր: Տող՝ 30: Մանրանկար՝ լգ: Կազմ՝ կաշեպատ տախտակ: Աստուտ դրոշմազարդ կտավ: Հիշատակարան՝ գրչի 114բ, 266բ:

**Բովանդակություն.**—Եղիշէի Պատմութիւն Վարդանայ եւ Հայոց պատերազմին: Ի պատմութենէն Թովմ. Արծրունոյ: Ղեւոնդայ Երիցու Պատմութիւն Հայոց: Բարսի Մաշկետրցոյ Մեկնութիւն Մարկոսի: Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց: Դաշանց Թուղթ:

(Ղեւոնդի մասն) Թ. 69ա—114բ. Պատմութիւն Ղեւոնդայ մեծի վարդապետի Հայոց, որ յաղագս երեւելոյն Մահմետի եւ զկնի նորին, թէ որպէս եւ կամ որով օրինակաւ տիրեցին տիեզերաց եւս առաւել, թէ Հայոց ազգիս... որք եւ Ամիրջըմումնիք անուանեցան, զի զքսան ամ կալեալ զհիսանութիւնն Մահմետ մեռանի...)( մինչեւ եղեւ թողութիւն գիտից եւ ծառայից եւ պարտոց եւ ապա կատարած: Կատարեցան վարդապետութիւն Ղեւոնդի վասն ժամանակագրաց տանն Թորգոմայ, ի հրամանէ տեառն Ծապիոյ Բագրատունոյ ի փառս եւ ի գովեստ ամենասուրբ Երրորդութեանն, որ է օրհնեալ յափառեանս, ամէն:

#### ՀԻՇՍԱՍԿԱՐԱՆ

Թ. 114բ (գրչի) «Գրեցաւ ձեռամբ ամենալիւբէյ եւ քելնուայ Մարկոսի բանի սպաստորի ի ՌԾԻԳ (1675) թուոց:

Թ. 266բ. Գրեցաւ եւ աւարտեցաւ սուրբ գիրս ի Ծաւշ քաղաքն, որ կոչի Իսպահան, ի գեղն Զուղայ, ի դրունս սուրբ Ստեփանոսին, ի հայրապետութիւն տէր Խաչատուր արի եւ քաջ վարդապետին, եւ ստատուն հայրապետ գրիչս յիշեալ, որ զանունս միայն ունիմ եւ գործս ոչ»:

## ՁԵՌԱԳԻՐ ԹԻՎ 5501

## ԺՈՂՈՎԱԾՈՒ

1683, 1684 թթ. Բաղեշ: Գրիչ՝ Գրիգոր քհն. (Ա), Միքայել երեց (Բ): Ստացող՝ Վարդան Բաղիշեցի: Գրիգոր վրդ.: Թերթ՝ 391: Թուղթ: 20,2×14: Երկայուն: Բոլորգիր: Տող՝ 27: Կազմ՝ կաշեպատ տախտակ: Հիշատակարան՝ գրչի 243բ (1683 թ), 323ա, 389բ (1684 թ), հետագայի 390 (ԺԸ դ):

Բովանդակություն. Ստեփաննոս Օրբելեանի Պատմթ. տառն Սիսական: Սիսեաց ժբ գաւառաց հարկն: Ղեւոնդայ Երիցու Պատմություն Հայոց: Պատմություն Վրաց:

(Ղեւոնդի մասն). Թ. 247ա—323ա. Ղեւոնդայ Երիցու Պատմաբանություն Հայոց (խիստ պակասաւոր) ...որ ընդ իւրով իշխանութեամբ, զի ուր եւ իցեն առ նա հաւցեն եւ վաղվաղակի հասեալք...) (մինչեւ եղեւ թողութիւն գիւղից եւ ծառայից եւ պարտուց եւ ապա կատարած: Կատարեցաւ վարդապետութիւն Ղեւոնդի վասն ժամանակագրաց տառն Թորգոմայ ի հրամանէ տեսուն Ծապհոյ Բագրատունոյ, որ եւ ցանկացող եղեալ սորին տէր Համագասպ ի պատուաւոր յազգէն Մամիկոնեաց:

## ՀԵՇՏԱՍԿԱՐԱՆ

Թ. 248բ (գրչի) Փառք եռակի... Արդ գրեցաւ գիրքս այս մատենաբ, որ է Կոնդակ Տաթեւոյ ձեռամբ տէր Գրիգոր անարժանիս, ի խնորոյ վեհի եւ երանեալ տեսուն Վարդանայ վարդապետի Բաղիշեցոյ. յիշատակ բարի ինքեան եւ ծնողաց իւրոց հօրն Եղիայն եւ մօրն Ղարիպին, ի թվականութեան Հայկազեան ւեռի ՌԺԼԲ (1683) ամին ի քաղաքս Բաղեշ, ընդ հովանեաւ սրբոյն Յովանու Մկրտչի եւ ի հայրապետութեան տեսուն Եղիազարու կաթողիկոսի, ի վայելումն անձին իւրոյ եւ յուրախութիւն մանկանց Սիոնի: Արդ, որք հանդիպիք այսմ գրոցս, յիշեցէք ի Քրիստոս զքաջ բաբունապետն Վարդան, եւ Աստուած ողորմի ասացէք իւրն եւ ծնողաց իւրոց, զի կրկին Լուսաւորիչ գտաւ Հայոց, զի բազում եկեղեցիս շինեաց ի հիմանէ եւ բազում մոլորեալ մարդիկ դարձոյց ի մեղաց յաստուածգիտութիւն յորդարութիւն քարոզութեամբն իւրով: Եւ բազում գիրս ետ գրել եւ զայլ հինս նորոգել զամենայն տեղեաց, եւս առաւել զԱմիրթօյու վանքս ի հիմանէ շինեաց, տնէրով եւ հնցնէրով եւ արդիւնացոյց բազում գրեանս ի սմա եւ միաբանս բազումս առաւել, քան զՏաթեւուն, որ է յոյժ պայծառ սաղմոսերգութեամբ եւ պատարագօք, զոր տէր Աստուած հաստատուն պահեացէ, եւ

յայսմ ամի ձեռնարկեալ է ի գործս շինել անդս մեծամեծս վանիցն, որ Ոխտիք ասի, զի է յոյժ անհարթ եւ անհեթեթ վիճօք լըցեալ, եւ ետ վարդապետին քարակոփացն զվեման հատանել եւ գտեղիքն գերմակ մոխրով լնուլ եւ որմով շուրջանակի պարըսպեալ ամրացոյց զգերեզմաններն եւ զագարակն: Որոյ տէր Աստուած հովանի եւ պարիսպ լիցի նմա եւ պահեացէ յամենայն արկածից չարեաց, եւ յետ աստեացս ելանելոյ ընդ երկոտասան սուրբ վարդապետացն եւ դասասաց է, լսել տացէ զերանելտ բարբառն, թէ եկ ծառայ բարի եւ հաւատարիմ, մոտ յուրախութիւն տեսուն քո. Եւ Աստուած ձեզ յիշողացդ եւ յիշեցելոյն եւ մեզ ողորմեացի յիւր միաւանգամ գալստեանն, ամէն:

Թ. 323ա. Վարդան բաբունապետն ի հալալ արդեանցն ետ հրաման ծրել փծուն գրչի Միքայելի մեղաւոր երիցու: Աղաչեմ յիշեցէք յողորմածն Աստուած եւ նմա փառք յաիտեանս, ամէն:

Թ. 389բ. Ըստերիւրեալ նորոգեցաւ պատմաբանութիւնս Հայկական ճեռի եւ տոհմի մականմամբ եւ ճշգրտագիտ երիւրմամբ լեզուակերտեալ Ղեւոնդեա երիցու գեղեցկախոս վիպասանի, նաեւ Եւագրեա սրբոյ նրբաբանի, ընդ սուսին եւ Զեւանշիրի վրացեաց հնամառ պատմագրողի ի Միքայել երիցէ, ի յաւորս ժամանակաց բազմազար եւ անպարտելի երկուց մահմետադաւան թագաւորաց Ահմատայ Եւմայելականի; որ ի Կոստանդուպոլիս եւ Ծահսէֆու, որ ի յարեւելս կոչս ի Ծօշ, որ եւ յԱսպահան ճանաչիւր, որք եւ բազմախոր խաղաղութիւն նալեալ ընդ միմեանս, անշաշտ, դաշամբ իբրեւ զամս Խ եւ Դ (44), զոր եւ ի յաւորս իշխանութեան Էջմիածնի հայրապետիս Եղիազարու, գրեցաւ այս գիրքս պայտմութեանց յիշատակ հոգելի եւ բանիւրն բաբունապետ Վարդանի եւ Գրիգոր վարդապետի, Աստուած գիրեանքն անասան պահէ յայսմ աշխարհիս եւ հետ աստեաց յելանելոյ ընդ երկոտասան վարդապետն դասակից եւ պսակակից առնէ, ամէն: Չոր եւ աղաչեմ, առ ի յազտակարսդ, որ ի սմա, յիշեալ զնուաստ Միքայել երեցս հանդերձ ծնողիք իմովք առ ի Քրիստոս եւ Աստուած զձեզ յիշէ յիւր միաւանգամ գալլստեանն, ամէն: Թուին ՌԺԼԳ (1684):

## ՁԵՌԱԳԻՐ ԹԻՎ 3588

## ՂԵՒՈՆԴ ԵՐԵՑ, ՊԱՏՄՈՒԹԻՆ ՀԱՅՈՑ

ԺԸ դար: Թերթ՝ 195: Թուղթ: 19,5×14: Միաւայուն: Նոտրգիր: Տող՝ 26: Մանրակար՝ կխ, լգ: Կազմ՝ կաշեպատ տախտակ

դրոշմագարդ: Աստառ կապույտ մետաքս-  
յա:

**Թ. 5ա-94բ.** Պատմաբանություն Ղևոնդ-  
դեայ մեծի վարդապետի Հայոց, որ յաղագս  
երեւելոյն Մահմետի և զկնի նորին, թէ որ-  
պէս և կամ որով օրինակաւ տիրեցին տիե-  
զեբաց, եւս առաւել, թէ Հայոց ազգիս.—  
Նախ և առաջին որք եւ(ւ) Ամիրջումնիք  
անուանեցան, զի զքսան ամ կայեալ զիշ-  
խանութիւնն Մահմետ մեռանի...) (մինչեւ  
եղեւ թողութիւն գիւղից և ծառայից և պար-  
տուց և ապա կատարած: Կատարեցաւ  
վարդապետութիւն Ղևոնդի վասն ժամա-  
նակագրաց տանն Թորգոմայ ի հրամանէ  
տեսնն Ծապհոյ Բագրատունոյ:

**ԶԵՌԱԳԻՐ ԹԻՎ 3741**

**ՂԵՒՈՆԴ ԵՐԷՅ, ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ**

1856 թ.: Մոսկվա: Գրիչ՝ Ոսկան Հովհան-  
նիսյանց Երևանցի: Թերթ՝ 60: Թուղթ: 36×  
20,5: Շղագիր: Տող՝ 31—33: Կազմ՝ սովա-  
րաթուղթ: Հիշատակարան՝ գրչի 1ա:

**Թ. 1ա—50բ.** Ղևոնդ պատմագիր.— («ի  
սկզբանէ պակասին երկոտառան գլուխք.  
մեք այսպէս գտաք՝ գրիչ): ...սո գունդ այլ  
ըմբշամարտ մարտի...» (մինչեւ եղեւ թո-  
ղութիւն գիւղից և ծառայից և պարտուց և  
ապա կատարած:

Կատարեցաւ վարդապետութիւն Ղևոնդի  
վասն ժամանակագրաց տանն Թորգոմայ ի  
հրամանէ տեսնն Ծապհոյ Բագրատունոյ.  
փառս և ի գովեստ ամենատրք Երրորդու-  
թեանն, որ է օրհնեալ այժմ և միշտ և յա-  
իտեանս յաիտենից, ամէն:

**ՀԻՇՍԱՍԿԱՐԱՆ**

**Թ. 1ա** (գրչի Ոսկան Տէր Գեորգեան  
Յովհաննիսեանց Երևանցի: «3» Յովիսի,  
1856 ամի: Ի Մոսկուա:

Վերոհիշյալ յոթ ձեռագիրներն բացի  
կան մաս երկու այլ ձեռագրեր, ինչպէս  
վերև մատնանշեցինք, Frederic Macler-ի  
ձեռագրաց ցուցակին մեջ, և որոնք ի պահ  
կմանն Փարիզի Ազգային Մատենադարա-  
նին մեջ<sup>9</sup>: Այդ ձեռագրերն են.

**ԶԵՌԱԳԻՐ ԹԻՎ 209**

**ԺՈՂՈՎԱԾՈՒ**

1855 թ.: Էջմիածին: Գրիչ՝ Կ. Վ. Ծաֆ-  
նազարյան: Մտացոլ՝ Ազգային Մատենա-  
դարան Փարիզի: Թերթ՝ 67: Թուղթ: 26,5×  
21,5: Երկայուն: Նոտրգիր:

<sup>9</sup> Macler, ոչ. աշխ., էջ 115—116:

Բովանդակություն—Ղևոնդ Երիցու Պատ-  
մութիւն Հայոց (Ը դար). Զիվանքերի Պատ-  
մութիւն Վրաց (Թ դար):

(Ղևոնդի մասն) **Թ. 1ա—39բ:** Histoire des  
conquetes des Arabes en Armenie et dans les  
provinces de l'Empire grec, par le pretre Lewond  
(VIII<sup>e</sup> s.).

**ԶԵՌԱԳԻՐ ԹԻՎ 208**

**ՂԵՒՈՆԴ ԵՐԻՅՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՅՈՅ**

1851—1852: Գրիչ՝ Ed. Dulaurier: Թերթ՝  
143: Թուղթ: 22,5×17,5: Երկայուն: Նոտր-  
գիր:

Բովանդակություն—Histoire de Mahomet et  
des Khalifes, ses successeurs, ainsi que de leurs  
conquetes dans les divers pays et principalement  
en Armenie jusque vers la fin du VIII<sup>e</sup> siecle de  
J'ere chretienne, par le pretre Lewond.

Այս երկու ձեռագրերն, ինչպէս Brossel-ի  
հիշատակարանն ստուգապէս կնշե<sup>10</sup>, օրի-  
նակված են Թիֆլիսի Կարապետ արք.  
Բագրատունւոյ պատկանչալ օրինակէն, այ-  
սինքն մույն ինքն ԺԷ դարուն վանի մեջ  
գրված գրչագրէն (թիվ 3070): Brossel  
կշեշտե թե՛ ձեռագրին մախկին պատկանե-  
լությունն և թե՛ ձեռագրին ԺԷ դարուն գր-  
ված ըլլալն:

Վեներտիկի Մխիթարյաններուն մոտ կան  
Ղևոնդի պատմագրության չորս այլ ձեռա-  
գրեր որոնք սակայն «անգոհացուցիչ բա-  
ներ են և շատ ոչ դարերու» ինչպէս կհաս-  
տատեն հանգ. Հ. Մեսրոպ վրդ. Ծանաշյան  
իր հոկտ. 27, 1973 թ. նամակով: Սա է ցան-  
կըն Վեներտիկի ձեռագրաց.—

- 1) Թիվ 2390, անթվական, հավանաբար  
1700-ի մեջ գրված: Գրիչն է Տիրացու  
Մելքիսեդէկ: Հիշատակարան չունի: Նո-  
տրգիր հատված մըն է միայն և ոչ ամ-  
բողջական:
- 2) Թիվ 43: Պակասավոր օրինակ մը: Հի-  
շատակարան չունի: ԺԷ դարու օրինա-  
կություն մը:
- 3) Թիվ 300: Օրինակություն պակասավոր:
- 4) Թիվ 2593: Գաղափարյալ 1836 թվին:  
Ո՞ր ձեռագրէն հայտնի չէ:

**ԷԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.—**

Մեր ուսումնասիրություններն կարող  
ենք եզրակացնել որ Ղևոնդի պատմագրու-  
թյան բնագրի բնության համար կարևորա-  
գույն ձեռագրերն են մախնագույնն (ԺԳ  
դար) և ընտրելագույնը (ԺԷ դար): Առա-  
ջինը (թիվ 1902) վերջին անգամ կազմված

<sup>10</sup> Անդ, էջ 115:

և նորոգված էր Շմավոն Լոռեցիի ձեռամբ 1664 թվին: Ինչպես վերև ըսինք ըստ Հ. Ն. Ակիմյանի «մեզի հասած բոլոր օրինակները ծագած են Շմավոն Լոռեցվո նորոգած այս ձեռագրեն, ուրեմն 1664-են հետո»: Իրոք, վերագրյալ բոլոր ձեռագրերն կկրեն 1664-ին հաջորդող թվականներ: Երկրորդ ձեռագիրը (թիվ 3070) ուղղակի կապ ունի Վարդան Բաղիշեցվո հետ, անոր գրիչներեն մին ըլլալով, ինչպես նաև ձեռագրին միակ ստացողը 1669 թվին: Այս ձեռագիրը, ինչպես վերև հաստատեցինք, կպատկաներ Թիֆլիսի Կարապետ արք. Բագրատունիի և ծառայած էր որպես բնագիր Կ. Վ. Շահնազարյանի 1857-ի հրատարակության, քանի որ վերջինս արտագրած էր իր օրինակը նույն այդ ձեռագրեն: Ծատ հավանական է Վարդան վրդ. Բաղիշեցվո հմայքին ու անունին հետ առնչել արտագրումը ԺԷ դարու (թիվ 3070) ձեռագրին որ կատարված պետք է ըլլա Շմավոն Լոռեցվո նորոգած ԺԳ դարու (այժմ թիվ 1902) ձեռագրեն, քանի որ վերջինս տակավին կմնար Ամրտոյու վանքին մեջ և Վարդան Բաղիշեցվո հսկողությանը ներքև: Վարդան զայն ա. Էջմիածնի նվիրեց միայն 1690 թվին (ՌՄԼԹ): Տես վերև, հիշատակարան ձեռագրի թիվ 1902: Նաև, երկու ձեռագրաց հանգումությունն հայտնի կդառնա Սարգիս գրիչի հիշատակարանեն որ կրկնված է ԺԷ դարու ձեռագրին մեջ, հիշատակարաններեն առաջ, ճիշդ այնպես ինչպես կերևի ԺԳ դարու ձեռագրի վերջավորության:

Մնացյալ չորս ձեռագիրներեն երկուքը թերի օրինակներ են, մին Բաղեշի մեջ օրինակված 1683—84 թվականներուն (թիվ

5501), ապահովաբար վերևի երկու ընտիր օրինակներեն միույն վրայեն, և մյուսը Մոսկվայի մեջ գրված 1856 թվին (թիվ 3741), շատ հավանաբար սկիզբի երկուտասան գլուխներով թերի գրչագրի մը վրայեն, (ըստ երևույթին 1668 թվին ի Տիգրանակերտ գրված և այժմ թիվ 4584 օրինակի հետևողությամբ), քանի որ երկուքին նույն թերությունն ունին:

Կմնան երկու գրչագիրք. Նոր Զուղայի 1675 թվին գրվածն (թիվ 1889) և ԺԸ դարու գրվածն (թիվ 3583), երկուքն ալ լման բնագրերով: Վերջնույս տեղն անհայտ է և հիշատակարան չունի: Մեր կարծիքն այն է որ այս երկու ձեռագրերն ևս ծագած են հնագույն ԺԳ դարու ձեռագրեն և հետևաբար որոշ առավելություն մը չեն ցուցներ անոր վրա: Այսուհանդերձ, Դևոնդի պատմագրության գիտական հրատարակությունն կարելի է լիակատար և բնական նկատել բաղդատելն ետք այս երկու ձեռագրերն ևս:

Երուսաղեմի ա. Հակոբյանց վանուց ձեռագրատան մեջ ցարդ կարելի չէ եղած գտնել Դևոնդի բնագրեն օրինակ մը, ինչպես կհաստատեն Նորայր արք. Պողարյանն ու Michael Stone, համաձայն վերջնույս գրած նոյեմ. 12 1973 թ. նամակին: Նույնն կարելի է ըսել Վիեննայի Մխիթարյանց ձեռագրատան համար, հիմնվելով Հ. Հ. Տաշյանի 1895-ին հրատարակյալ **Ցուցակ հայերեն ձեռագրաց-ին** վրա:

ԶԱՎԵՆ Ծ. ՎՐԴ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Ֆիլատելֆիա  
Հունիս, 1975

